քի լողունդը : Լուսաշխատավորների այդ հասարակական-քաղաքական աշխատանքները, վոր կապված չեցին նրանց հիմնարկում տարած աշխատանքների հետ, պրոլետարական հասարակայնության խորքում նրանց վերադասատիարակման և դասակարգային ինքնաղիտակցության մշակման անհրաժեշտ դպրոցը հանդիսացան :

Բայց այժմ, կուլտուրական հեղափոխության դարգացման այս ժամանակաշրջանում, յերբ կուլտ-հիմնարկները պետք եւ դառնան կոմունիստական պրոպագանդայի խսկական ոջախները, յերբ դպրոցը հիմնականում պետք եւ դառնա, վոչ միայն ընդհանրապես կոմունիզմի սկզբունքների հաղորդիչը, այլ և «պրոլետարիատի գաղափարական, կաղմակերպչական, դաստիարակչական ազգեցության հադորիչը աշխատավորական մասսաների կիսաողբոլորարական և վոչ պրոլետարական շերտերի վրա, այն նպատակով, վորապետի գաղափարակիվի մի սերունդ, վորը ընդունակ լինի վերջնականապես հաստատել կոմունիզմը», ինչպես առում է կուսակցության ծրագիրը, յերբ անդրադիտության վերացման և կաղըերի պատրաստման խնդիրները քաղաքական խնդիրներ են դառել, յերբ կուլտուրական շինարարության ամբողջ ֆրոնտը անմիջականորեն ոժանդակում և դեպի սոցիալիզմը շարժման տեմպերին—լուսաշխատավորների հասարական-քաղաքական աշխատանքները պետք եւ ընթանան կուլտուրական շինարարության խնդիրների լուծման ուղղությամբ, առաջին հերթին այն կուլտ հիմնարկների հասարակական-քաղաքական աշխատանքների հունով, վորտեղ աշխատում և լուսաշխատավորը :

Զի կարելի բարձրացնել կուլտհիմնարկի դերը, նրա հասարակական-քաղաքական նշանակությունը, չի կարելի կուլտ լուսավորական հիմնարկներից իրոք վոր ստեղծել կոմունիստական պրոպագանդայի խսկական ոջախ, յեթե

լուսաշխատավորը վորպես հասարակական դործիչ չկապի իր կուլտ հիմնարկի խնդիրները իր հասարակ-քաղաքական աշխատանքների հետ : Ճիշտ չե , յերբ լուսաշխատավորը մեծ աշխատանք ե տանում դյուղում հացամթերման կամպանիայի համար և մոռանում ե իր դպրոցի մասին : Ճիշտ չե , յերբ խրճիթվարը փակում ե խրճիթ-ընթերցարանը և զբանում ե գյուղից գյուղ ժողովներում ազիտացիա յե անում , անցնելացնում քաղաքական կամպանյաներ , կազմակերպում ե ժողովներ և այլն :

Լուսաշխատավորը իր հասարակական-քաղաքական աշխատանքները մենակ չպետք ե տանի , այլ նա այդ աշխատանքները պետք ե կապի դպրոցի , խրճիթ ընթերցարանի և նրա ակտիվի հետ , չաղկապելով այդ աշխատանքները դյուղի և քաղաքի տնտեսական , խորհրդային , քաղաքական և կուլտուրական աշխատանքներին :

Ահա այն նոր դրույթը , վոր պետք ե տալ լուսաշխատավորի քաղաքական-հասարակական աշխատանքներին :

Ի՞նչ գծերով պետք ե ընթանա լուսաշխատավորի քաղաքական-հասարակական աշխատանքը , յեթե յելնենք նրանից , վոր այդ աշխատանքը պետք ե ոգնի ել ավելի արագացնելու կուլտուրական շինարարության տեմպը :

Կուլտուրշավները լուսաշխատավորների շուրջ ստեղծեցին կուլտբանակայինների շատ խոշոր ակտիվ , նրանք , լուսաշխատավորների ամենամոտիկ որդաններն են : Կուլտրանակային լայն ակտիվը կարիք ունի , ինչպես ընդհանուր , նույնպես և մասնագիտական դաստիարակության : Լուսաշխատավորները պետք ե ոգնեն կուլտբանակայինների վորակավորման դործին : Այստեղից կաճեն բանվոր առաջքաշվածները , այստեղից կաճեն կուլտուրաշխատավորները , նոր նախակապրոցականները :

Շատ սուր ե դրված լուսաշխատավորական կաղըրերի

վեֆիցիտի հարցը : Մոտ ժամանակներում լուսհիմնաբկների լայնացող ցանցի համար մեծ թվով լուսաշխատավորներ են հարկավոր : Գերատեսչական (ведомственныя) կարգով, միայն բյուջետային միջոցներով այդ հարցը լուծել չի կարելի : Լուսաշխատավորները, առանձնապես մանֆակների և մանկտեխնիկումների վրակիցաւ գրուստաները, զիտական աշխատավորները պետք եւ ճեռնամուխ լինեն բարակների և բանվորների համար դասընթացներ կազմակերպելու, նախապատրաստեն նրանց բանֆակներ և մանկավարժական դպրոցներ ընդունվելու, ինչպես և անմիջական մանկավարժական արտադրական աշխատանքի անցնելու համար : Մեր մի շաբաթադարական պատրաստող դասընթացներ :

ՎՃՌԱԿԱՆՈՒԹԵՆ ԵՐԵՄՆԵՐՍ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

Գյուղական լուսաշխատավորների վրա պլինումը դնում է խոչոր քաղաքական պատասխանատվություն, գյուղի լուսաշխատավորներին ողնելու իմաստով կուլտաշխատանքները ընթանում են չափաղանց թույլ : Մինչ այժմ լուսաշխի տների մեծ մասը չեն սպասարկում այդ բնագավառը :

Պրոֆմիութենական տեղական կազմակերպություններն ել նույնպես քիչ են ողնում գյուղական լուսաշխատավորներին : Գյուղական տնտեսության բնագավառում դրված այժմ յան խնդիրների լուծման համար մեր գյուղական լուսաշխատավորը ամենենվին զինված չե :

Գյուղական լուսաշխատավորների մեջ աշխատելու նոր ձևեր են առաջացել - յեռորյա հավաքները (трехдневки) : Այդ ուղղությամբ մի շաբաթ կազմակերպություններ բավական խոչոր փորձ ունեն : Խվանովսկի շրջանի Ալեքսանդրովսկի քաղաքում մոտ անցյալում տեղի ունեցավ գյուղական լուսաշխա-

տավորների հավաք։ Նրանք կարողացել են գործը կազմակերպել այս այսպես, վոր հավաքին յեկել են վոչ ընտրված պատգամավորները, յեկել եյին վոտքով և հրաժարվել եյին այն դրամից, վոր միութենական կազմակերպությունը առաջարկել ե նրանց։ Նրանք խնդրել եյին այդ դրամը պահել և վարոշ ժամանակից հետո կազմակերպել դարձյալ մի այդպիսի հավաք։ Նրանք ասում եյին «Դուք մեղ խոշոր լիցք (զարյադկա) տվիք և մենք հիմա մեղ ավելի ամուր ենք զգում»։

Բայց մի շարք կազմակերպություններ շատ թերահավատ վերաբերվեցին այդ հավաքներին և չոգտազործեցին դյուլական լուսաշխատավորների մեջ աշխատելու այդ նոր ձևը։

Հյուսիսային Կովկասում շատ հետաքրքիր փորձ են արել, դյուղն ուղարկելով քաղաքի վորակյալ լուսաշխատավորներից կազմված մանկավարժական բրիդագներ։ Դա կենդանի ողնություն է, կենդանի գեկավարություն։ Շրջիկ ֆոնդ ունեցող գրադարանները գեռ ևս յեղակի ծիլեր են։

Մեր միութենական կազմակերպությունը և ամբողջ պրոֆշարժման անցյալը տառապում եր ոպորտունիզմով, դյուղական աշխատանքներին նշանակություն չեր տրվում, յեթե հիմա միությունը վճռապես յերեսը շքարձնի դեպի գյուղի լուսաշխատավորը և դյուղի սոցիալիստական սեկտորի կուլտուրական շինարարությունը, ապա կձգվի նույն սիսակների նույն թելը, ինչ վոր գծվում եր առաջ։ Դրանով պետք է ստուգել միության աշխատանքի քաղաքական ամրությունը։

Պլենումում խիստ սրվեց մեր միության դերի հարցը դյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ Միութենական աշխատանքի գծով հարկավոր ե ել ավելի մեծ ուշադրություն դարձնել դյուղի լուսաշխատավորին, ել այս-

ի շատ անմիջական ոգնություն ցույց տալ: Հարկավոր ե
ղնալ տեղերը և այնտեղ ոգնել:

Մեր յուրաքանչյուր բրիգադան, վոր զնում և գյուղ
գարնանացանի կամպանյան անցկացնելու, իր առաջ սկստք
և դնի այդ խնդիրը:

Աղքային հանրապետություններում անչափ ավելի դըժ-
վար ե իրադործել կուլտուրական շինարարությունը, քանի
վոր, ազգարնակչության խոշորագույն տոկոսը անդրադեռ
ե, քանի վոր մեր լուսաշմատավորական մասսան շատ թույլ
կուլտուրականություն ունի: Պետք ե ուղղակի ասել, վոր մեր
աղքային միութենական կազմակերպությունները չեն կարո-
ղանա իրենց ուժերով հաղթահարել այդ խնդիրները:

Իվանովսկու մանածագործարանները շեֆություն են վերց-
րել Միջին Ասիայի բամբակացանի շրջանների վրա: Ինչո՞ւ
Կարկովի, Մոսկվայի, Լենինգրադի միութենական մեր կաղ-
մակերպությունները շեֆություն չպետք ե վերցնեն ազգա-
յին կազմակերպությունների վրա և ինչու չպետք ե ողնոն
աղքային փոքրամասնություն կազմող լուսաշմատավորնե-
րին: Այնտեղ պետք ե ուղարկել բրիգադներ, նրանց պետք ե
ողնոն նյութական միջոցներով, ոքրականությամբ և այլն:

«Բարոտնիկ Պրոսվեչչենյայի» հրատարակչության ա-
ռաջ հարց պետք ե զնել, վոր նա իր բաժանմունքները կաղ-
մակերպի աղքային հանրապետություններում և ունենա իր
խմբագրական-հրատարակչական բաժինները: Այն դրէնը,
վոր հրատարակվում են այստեղ կարող են ողատագործվել աղ-
քային լեզուներով: Պետք ե կուլտ խնդիրներին, մանկավար-
ժության, պրոֆեսիոնալ խնդիրներին նվիրված մասսայական
դրականություն հրատարակել աղքային լեզուններով: Մեր
աղքային կազմակերպությունները հիմա դրանց սուր կարիք
են դրում: Պետք ե ավելի մեծ նյութական ոժանդակություն

ցույց տալ ազդային հանրապետություններում տարվող հը-
րատարակչության գործին :

ՊՐՈՑԵԿԱԴՐԵՐԻ ԱՐՏՍԴՐԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱ-
ՊԱՏՐՄՍՏՈՒՄԸ ՎՃՌԱԿԱՆ ՈՂԱԿՆ Ե

Միութենական կուլու աշխատանքի վերակառուցման
հարցը գեմ ե առնում կուլու աշխատողների կադրի ողբերգե-
մին : Միության կուլուաշխատողներին բնութագրելու համար
կարելի յե բերել միայն մի ցայտուն որինակ, մեր կուլու-
հանձնաժողովների կազմում կուսակցական շերտը ավելի
փոքր ե, քան վերստուգիչ հանձնաժողովների կազմի կու-
սակցական շերտը : Վերստուգիչ հանձնաժողովներում կու-
սակցականները կազմում են 4,7 %, իսկ կուլուհանձնաժո-
ղովներում՝ 4,2 % :

Այս թվերը ամենայն պարզությամբ ապացուցում են,
վոր հարկավոր ուշադրություն չենք դարձնում կուլուաշխա-
տողների կադր ջոկելիս : Մինչդեռ կուսակցության կենտկո-
մը գրել ե «անհրաժեշտ ե վճռականորեն բարելավել կուլու-
աշխատողների կադրը, սիստեմատիկութեան բարձրացնել նրա
քաղաքական և կուլուարական մակարդակը, մաքրել նրա
շարքերը իդեոլոգիապես ոտար տարբերից»: Պրոֆմիություն-
ների կուլուաշխատանքների մասին ընդունած վորոշման մեջ
գրված ե «ամբողջ կուլուասավորական աշխատանքներում
անհրաժեշտ է կոմունիստների ակտիվ մասնակցությունը» :

Այս վորոշումը ընդունելուց հետո անցել ե մոտավորա-
պես կես տարի: Կարո՞ղ ենք արդյոք ասել, վոր այդ յնադա-
վառում վորոշ առաջադիմություն ենք ունեցել: Վոչ, մեղ
մոտ մինչեւ հիմա յել միության կուլուաշխատողի վրա նա-
յում են վորապես մի աշխատողի, վորին առաջին հերթին կա-
րելի յե հանել աշխատանքից, առաջին հերթին փոխադրել
մի այլ աշխատանքի, առաջին հրեթին մորիկիդացիայի յե-

թարկել։ Հետո ինչ, վոր նա կուլտաշխատող ե, թող հիմա
ել ունա աշխատի վորպես Փինտեսուէ։

Պրոֆկազրերի հարցը ամենահիմնական հարցերից մեկն
է պրոֆաշխատանքը ամբավաղնդելու համար։ Կուլտաշխի կենտ-
կոմը ամառը կաղմակերպեց կուլտաշխատղների դասըն-
թացներ, բայց ՅՈ ուսանողներից, վորոնք վերջացրել եյին
դասընթացները 28-ը աշխատում են այլ բնագավառներում։

Կուլտաշխատողների այսպիսի հոսունություն, այսպիսի
թեթեվ վերաբերմունք նրանց ընտրության մեջ, անթու-
լագրելի յե, քանի վոր մեր միության մեջ կուլտ աշխատան-
քը իդեոլոգիական Փրոնտ է։ Մենք պետք ե ամեն կերպ ամ-
րացնենք այդ աշխատանքը։ Կուլտաշխատանքը վոչ թե պիտի
չըջափակել կուլտբաժիններում, այլ այդ աշխատանքով
պետք ե ներծծվի միութենական աշխատանքի ամբողջ սիս-
տեմը, միութենական աշխատանքները այժմվանից պետք ե
վերակառուցել, վորպեսզի կուլտաշխատանքը, վորպես աշ-
խատանքի կարեվորագույն մի մաս, միութենական տշխա-
տանքի ամբողջ սիստեմի որդանական մասը դառնա։ Կուլտ
աշխատանքը պետք ե տանել վոչ միայն կուլտբաժնում այլ և
որագուրական բաժնում։ Ամբողջ միութենական աշխատանքը
պետք ե ներծծվի կուլտուսավորական աշխատանքներով։
Նա մեր յուրաքանչյուր աշխատողի ձեռքին—և նախադահի,
և քարտուղարի, և տարիի տնտես։ աշխատողի ձեռքին մի-
ջոց պետք ե լինի իրավուրծելու համար այն խնդիրները, վոր
դրված են մեր միության առաջ։

Կուլտաշխատանքի հիմնական խնդիրն ե լուսաշխատա-
վորական մասսաների քաղաքական և արտադրական պատ-
րաստության մակարդակի բարձրացումը նոր խնդիրների
իրավուրծման համար, և նրանց հասարակական-քաղաքական
ակտիվության մզումը այն ուղղությամբ, վոր ուժեղացվեն

կուլտուրական շինարարության տեմպերը։ Սրանումն և
կուլտաշխատանքի վերակառուցման հիմնական իմաստը։

Վորպեսդի այդ իրագործվի հարկավոր և վերակառուցել
միութենական ամբողջ աշխատանքը։ Մենք, վորպես կուլտ-
րաֆնականներ ասում ենք, հարկավոր չեն կուլտ բաժիննե-
րը, թող յուրաքանչյուր սեկտորում լինի կուլտաշխատանքի
մի մասը, թող յուրաքանչյուր սեկտորի աշխատանքի վողջ
սիստեմը ներծծվի կուլտաշխատանքով։ Միայն այդ ճանա-
պարհով մենք կկարողանանք մեր պրոֆմիությունները իս-
կապես վոր դարձնել իսկական կոմունիզմի լենինյան դպրոց-
ներ։

ՇԱՐԺԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ- ԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Մի շաբք ընկերներ պահանջում եյին տեղերում իրենց
տանելիք «կուլտաշխատանքների պլանը կազմել և տալ գե-
ղատոմսեր»։ Դրանից վճռականապես պետք եւ հրաժարվել։
Պատրաստի դեղատոմսերը տալ չի կարելի, մենք ապրում ենք
կուլտուրական հեղափոխության շրջանում։ Տալ դեղատոմ-
սեր, վորոնք կարելի կլինի կպցնել, վորպես սպեղանի վեր-
քոթ տեղերին, և կարծել, վոր այլպես կարելի յեւ աշխա-
տանք ստեղծագործել, հրահրել մասսաների ձեռներեցու-
թյունը և բարձրացնել նրանց շարժումը—դա աբսուրդ է։
Դեղատոմսերը ավելի ևս կչորացնեն առանց այն ել ջերմո-
ցային կուլտաշխատանքը։

Հիմա ներքեվում կուլտուրական շինարարության խըն-
դիրների շուրջ շարժում և ստեղծվում։ Լուսժողկոմատը կա-
պոցներով մարդիկ եւ ուղարկում տեղերը ուսումնասիրելու
թե ինչ և այլտեղ կատարվում, վորպեսդի հնարավոր լինի
գեթ մի կերպ համնել այդ շարժման հետևից։

Իսկ մեր կուլտախատանքում կա՞ այդպիսի շարժում։

վոչ, չկա: Խօկ այնտեղից վորտեղ չկա շարժում—դիտկնաւուտ ե գալիս: Հարկավոր են կուլտաշխատանքի շուրջը մասսաներին մորիկիզացիայի յենթարկող լողունդներ: Հարկավոր ե սիստեմատիկ ոգնություն գրքով, ծրագրով, կենդանի ղեկավարությամբ, փորձի փոխանակությամբ: Անհրաժեշտ է կուլտաշխատանքի դաժան քննադատություն:

Ընկ. Կիյենիցեն ինձ մեղադրում եր, վոր յես քիչ խոսեցի կուլտաշխատանքում ունեցած ապոլիտիզմի մասին: Այդ խնդրի շուրջ մենք արդեն ունենք մի շարք փաստաթղթեր և վորոշումներ: Վոր պըսոֆմիությունական կուլտ աշխատանքը ապոլիտիկ և ընթացել, այդ արդեն գիտակցված և թե զեկավար կադրերի և թե լուսաշխատավոր առաջադեմ շերտերի կողմից: Բայց ի՞նչպես այն վերակառուցել: Հենց այդ հարցին, թե ինչպես վերակառուցել կուլտաշխատանքը, վոր նա ապոլիտիկ չլինի, հենց այդ հարցին ել նվիրված եր իմ վեկուցումը: Կուլտալուսաշխատավորների վերակառուցումը հեշտ գործերից չե: Պետք ե նկատի առնել վոր կուլտաշխատանքի վերակառուցումը գիմադրության կհանդիպի լուսաշխատավորների մի մասի կողմից և հենց այն մասի կողմից, վորը կազմում ե մեր կուլտակտիվը, վորը տարիներով դատիարակվել և ապոլիտիկ կուլտաշխատանքների մեջ:

Ցերբ արևմտյան շրջակի միութենական կաղմակերպությունը ցնցեց ԱԱՏ-ի վարչությանը՝ ցրեց այն, կուլտակտիվը այդ վերակառուցուցմանը լուրջ դիմագրություն ցույց տվեց: Հին կուլտակտիվը ասում եր «ինչ և ընկերներ, դուք ուղղում եք լուսաշխատավորի տան փոխարեն կոմքուհ կառուցել, իսկ մենք ուղղում ենք կազմակերպել գեղարվետական սպասարկումը, և այն ել անպայման Մոսկվայի արտիստներով: Մենք ուղղում ենք, վոր դուք բավարարեք մեր կուլտուրական պահանջները և չենք ուղղում, վոր կուլտաշխատավորների Տունը կոմքուհի վերածեք».

Յերբ արևմտյան շրջանի մի շաբք խորհրդակցություններում դրվում եր քաղաքական լուսավորության հարցը—այդ ևս դիմադրության եր հանդիպում։ Մի քանի կուլտաշխառողներ ասում եյին, թե թեևս այդ քաղաքական լուսավորությունը կարելի յէ անցկացնել ընտանեկան յերեկույթների, ևմի բաժակ թեյերի՛ ժամանակ։ Այդ յերեկույթներում, իբր թե, կարելի յէ քաղաքական դաստիարակման դործը անցկացնել։

Դա հաշտվողակություն է, վոր յերբեմն թույլ են տալիս մեր կուլտ աշխատողները, այդ պոչականությունը շիկացած յերկաթով պետք է այրել։ Պետք է տսել, վոր լուսաշխիտների վաչությունների ցրման վորձը մեր պրակտիկայում չունենք։ Յեթե մենք ցրում ենք պրոֆեսուալիերպությունները ոպորտունիստական պրակտիկայի համար, առա լատերի վարչությունների անդամների, մեր կուլտաշխատողների պրակտիկայում ոպորտունիզմի բեռներ ունենք։ Միութենական որդանները կուլտ աշխատանքի նկատմամբ հարկավոր ուշագրությունը չեն դարձնում։

ԱԹԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՄԻՆՉԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտական աշխատավորների սեկցիայի կուլտաշխատանքի մինչ այժմ ունեցած գրութը միանդամայն անպետք է։

Ի՞նչպես ե գիտական աշխատավորների սեկցիան իր անդամներին ներգրավում կուլտ աշխատանքների մեջ։ Սեկցիան կարծում եր, վոր գիտական աշխատավորին ներգրավելու ողակը, վորից պետք է բոնի սեկցիան, դա գիտական աշխատավորի ընտանիքն է։ Գործնականում սուացվեց այն, վոր գիտական աշխատավորների տները ավելի շատ սպասարկում եյին գիտական աշխատավորի ընտանիքին, իսկ ամենից քիչ իրեն, գիտական աշխատավորին։ Գիտական աշխատավորների Տան դեմքը այլակերպվում եր։

Պիտումը, կուլու աշխատանքների նոր դրույթ և տալիս, կուլուաշխատանքը պետք է միաձուլվի կուլուբական շինուարաւոթյան ընդհանուր խնդըներին. այդ խնդիրը պետք է դնել նաև գիտական աշխատավորների սեկցիայի առջև: Ժամանակ և զաղարել վիճակիու ինչ վոր ուրույն խնդիրներ և ինչ վոր ուրույն մոտեցում լուսաշխատավորների այժե գրուպային: Գիտական աշխատավորների առաջ, վորպես խորհրդային աշխատողների և մեր միության ջոկատներից մեկի առաջ պետք է ավելի ամուռ դնել միության քաղաքական ընդհանուր խնդիրները: Միությունը իր անդամների վորակյալ խմբին պետք և ներգրավի միության առաջ դրված ընդհանուր խնդիրների լուծման գործում:

Հարցը այսպես չեմ զնում թե հարկավոր և կուլու աշխատանքը միացնել, թե հարկավոր չե, գիտական աշխատավորների սեկցիայի դժու առանձին կուլուաշխատանքներ տունել: Դեռ շուտ և հարցը այդպես զնելու համար: Բայց հարկավոր և դնել աշխատանքի հետ ավելի մեծ կոնտակտի հարցը; ընդհանուր ձեռնարկումների հարցը, մանավանդ լոյն մռայալական, աղիտացիսն աշխատանքների բնագավառում:

Գիտական աշխատավորները շատ բան կարող են նույնականացնել լուսաշխատավորների վերափրակավորման համար, նրանց պոլիտեխնիկացիայի համար, և նրանցից կարող են տռանսօդ հառարակական աշխատանքների փարձը:

Մոտ անցյալում Մոսկվայում տեղի ունեցավ Գիտական աշխատավորների խորհրդակացություն՝ զարնանացանի կամուպանիույին մասնակցելու մասին: Խորհրդակցությունը միության կենտրոնից խնդրեց փոխել նախալծված քանակը և ցանքուի դաշտերը ուղարկել վոչ թե 150 գիտական աշխատավոր, այլ 750: Ինչքան ամուռ դնենք հարցերը գիտական աշխատավորների առջև, այնքան ավելի հեշտ ու շուտ նրանք կմուտենան միությանը և ընդհանուր խնդիրներին:

Տեխնիկական աշխատ սվերների մեջ տարվելիք աշխատանքների՝ բասին կենտրոնական կոմիտեն վերջերս մշակել և մի շարք հարցեր : Յուցմունքներ են տրված, թե ինչպես պետք և տեխնիկական աշխատակողների մեջ տանել քաղլուսավորության, որության աշխատանքները : Անուեղ ասվում է, վոչ միայն անդրագիտության վերացման, վոչ միայն ուսումնական հիմնարկներ մանրլու համար նախապատրաստվելու մասին, այլ և նրանց արագության վրակը բարձրացնելու մասին : Դրաբանի մաքրողները, հսկիչները միաժամանակ կրում են և վորոշ մանկավագժական ֆունկցիաներ, վորոշ չափով հանդիսանում են և դաստիարակողներ : Իսկ մեր մանկավարժները իրենց ամենամոտ ոգնականներին — տեխնիկական աշխատավորներին բոլորովին չեն ուսագուծում և յերեխաններին խորհրդացին դաստիարակություն տալու գետելիքների հետ ամենեվին հաղորդակից չեն անում :

Տեխնիկական աշխատակիցների հետ պետք և անցնել հերածարկան մի կուրս, արտադրության մասին, ինչպես հիմա այդ անում են ինդուստրալ միավորությունները :

«Տեխնիկական աշխատավորի թերթ»-ում այդ բոլոր նոր հարցերը կլուսաբանվեն : Բայց ուեազ և տաել, վոր «թերթը» շատ վատ և տարածված, նևագույն մասին շատերը նույնիսկ չգիտեն :

ՄԱՐՏԵՐՈՒՄ ՊՐՈՃԿԱԴՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկեր Ֆրուլովը իր յելույթում պլո՛կադրերի մասին մի շատ կարելոր մոմենտ ընդգծեց : Ամեն տեղ կադրերի հարցը սուր և դրված, այն նաև պրոֆեսուանքների ընադալավորում : Պրոֆաշխատանքը յերեսով չըջում և դեպի արտադրությունը, և նոր պահանջներ են դի վում պրոֆաշխատողների առաջ :

Զի կարելի հիմա աշխատել պրոֆասպարիղում, յեթե
պրոֆաշխատողը չդիմե և չի ուսումնասիրել արատադրու-
թյունը: Դրա համար ել պրոֆլուսավորության սխատեմի մեջ
մտցրված և և արտադրական խնդիրների լուսաբանումը,
այլպես ել կազմված են ծրագրները: Պրոֆլուսավորությա-
նը արված և պրոֆկադրեր պատրաստելու նպատակադրում:
Բայց պետք է առել, վոր այդ գործում գեռ բեկում չկա,
կենտրոնական հեռակա դասընթացներում, մեր ունեցած
174.000 ստորին ակտիվի դիմաց հունվարի 20-ին սովորում
ելին միայն 1.500 հոգի: Յերբ կենտկոմը սկսեց հրահրել տե-
ղերին, վորոշ չափումը գործը՝ լավացավ, բայց դարձյալ յե-
զան կազմակերպություններ, վոր տեղից չշարժվեցին, և
պրոֆկադրեր պատրաստելու գործի նկատմամբ ունեցան
ֆորմալ մոտեցում:

Կենտկոմի հարցումին Դաղստանը պատասխանում է.
«Մենք առաջարկեցինք ընդհանուր ժողովներում հեռակա
կուրուրի մասին զեկուցողներ ուղարկել, բայց վոչ մի պա-
հանջ չներկայացվեց, —կարծում ենք, վոր արել ենք այն ա-
մենը ինչ կարող եյինք»:

Բայց այնուղ, վորտեղ միութենական գործի վրա
կանգնած և կենդանի մարդը, վոր պատած չե միութենական
մամուլով, այնուղ անում են մեծ գործեր: Այսպես որինակ՝
Մորդովիկի ոկրուզում մեր խմբկոմի նախագահ բաժանորդա-
գրվել և հեռակա դասընթացներին, դրականություն և գուրս
դրել և ամրող կոլեկտիվը կազմակերպել և այնպես, վոր
յուրաքանչյուր ժողովից առաջ կոլեկտիվի վուե անդամ
այդ դասընթացների թեմաներից վորեվե մեկով զեկուցում
և կարգում և կոլեկտիվի հետ քննում զեկուցումից ըղխող
գործենական առաջարկները, վոր կարելի յե անել իրենց խմբ-
կոմին: Նրանք վերջերս իրենք այդ աշխատանքի մասին զե-
կուցում եյին ուղարկել, : Ստեղծվել ե մի տեսակ հյուսվածք

կուլեկտիլ ուսման և միութենական ընթացիկ դորձնական աշխատանքի միջև : Միութենական դորձնական աշխատանքները լուսաբանվում են պրոֆը լիժման տեսությունը : Ավերդովակուում հեռակա կոմունիվերսատետում լուսաշխատավորների համար առաջուց պահված ե 1.500 տեղ : Ավերդովակուում կոմունիվերսատետ են ճգուտմ զարգացածի մոտ բանվորները և շատ յերջանիկ են զգում իրենց, յեթե տեղավորվում են այնուուղ, իսկ մեր լուսաշխատավորներից 1.500-ի փոխարին հունվարին դրվել ենին միայն 150 հոգի : Այս կարելի յերաշտարել միայն քաղաքական լուսավորության թերապեակատմամբ և մեր պրոֆետուրմակերպությունների այդ դորձի մեջ ունեցած անկարողությամբ :

Միաժամանակ լուսաշխատավորները Մոսկվա յեն դրում, խնդրում են ովդնել ուսանելու, հարցնում են, թե ինչպես կարելի յե ընդունակի Ավերդովակուում ունիվերսատուր :

Քաղաքական լուսավորության հարցերի պրովադանուան բավարար չե, բավարար չե մասսաների ուշադրության մորիլիքացիան, բավարար չե այդ դորձի շուրջ մասսաների կազմակերպումը—պրոֆետուրերի հարցը դեռ պրակտիկութեան չի դրված :

ԲԱՆԱԼ ԼՈՒՍԱՇԽԻ-ՏՆԵՐԻ ԴՐՆԵՐԸ

Լուսաշխի տների աշխատանքների վերակառուցումը պետք է ընթանա նույն լողունդի տակ—«յերեսը զեպի արտադրություն» : Լուսաշխի տան դրները պետք է Պանալ վոչ միայն ակումբի անդամների համար, այլ և կուլտրանակային այն ակտիվի համար, վոր ովնություն և ուղում իր աշխատանքում : Նա կարող է մեր ակումբում ստանալ համապատասխան դրականություն, կոնսուլտացիա, կորուպ և լույ գասախոսությունների, պարագել դողրոցում և դասընթաց ներում :

Պետք է դուրս բերել լուսաշխի տները այն ինքնամփոփ վիճակից, վորի մեջ նրանք զանգված ելին մինչեւ որս, պետք է լուսաշխի տների զոները բանալ բռլոր նրանց համար, ովքեր հատաքրքրվում են կուլտուրական խնդիրներով, աղաս մուտք սիետք և ունենան ժողովրդական լուսավորության սեկցիաների անդամները, կուլտրանակայինները, դործարանի և ֆարրիկայի կուլտակախվը: Բայց գրահետ միասին, պետք է հարց զնել, վոր մետաղաղործների, մանածագործների, տպաղթիչների և այլ միությունների ակումբների վոներն ել բաց լինեն մեր լուսաշխատավորների առջե, վորապեսզի լուսաշխատավորը մետաղաղործների ակումբ գտալով ստանա այն լիցքը, վոր անհրաժեշտ և ուղիտեխնիկական զոլորց կառուցելու համար:

Լավ վիճակում չե Լատերի շենքերի հարցը, շենքները խըլում են, զործը տարվում և անսննտես, միութենական կաղմակերպությունները շատ քիչ բան են անում վորպեսզի շենքերը նրանցից չխթին: Լատերը խըլում ելին բիլիարդանոց և այլ փոքր կուլտուրական գործերը կաղմակերպելու համար, իսկ միություններին կաղմակերնությունները միայն ոչքերն ելին չըում: Մենք ստիպված յեղանք մի քանի հարցեր զնել զեկավար որդանների, մինչեւ անդամ Հե(ր)կ Կե-ք առաջ և այդպիսով միայն հաջողվեց պահել մեր ձեռքին մի շարք տներ: Բայց մենք արձանագրում ենք, վոր յերբ ակումբի շենքերը պաշտպանելու խնդիրը և լինում, տեղի կազմակերպությունները բավականանում են միայն նրանուն, վոր հարցը զնում են վերապատճառը մարդինների առաջ, իսկ տեղերում ցույց են տալիս միայն պասիվ դիմադրություն:

Համլուսաշխի նախաղահությունը ակումբային ֆոնդերի կենարանացման վորոշումն և ընդունել այլ հարցը գրվում և ոլլենումի առաջ ի քննություն: Այս միջոցը խիստ անհրաժեշտ է: Տեղերի նախահաշվիններում ակումբային շի-

հարաբության շտա փոքրիկ Փոնդեր կան, այդ միջոցները այնքան փոքր են, վոր ակումբային շինարարության սկառահանջները բավարարել չեն կարող: Ֆոնդը ծախսվում է տանիքների և հատակների փոքրիկ վերանորոգումների, ինչպես և կահույք ձեռք բերելու համար:

Բայց, այդքան փոքր գումար ունենալով հանդերձ, միութենական կազմակերպությունները թուլացնում են իրենց ճնշումը տեղական լուսրաժինների վրա, վորպեսի վերջիններս Լատերի պահպանման համար գումարները բայց թողնեն տեղական լյուծեյից, վորպես սուբսիդա: Ֆոնդերի կենտրոնացման դեպքում մենք 1930 թ. կունենանք 387.000 ռուբլի, իսկ համարկի վերջում 4,5 միլիոն ռուբլի:

Այսպիսի գումարները հնարավորություն կտան մեկ բանկերից վարկեր ուտանալ և ակումբային նոր չենքեր կառուցելու գործը դնել այնպես, ինչպես վոր հարկին ե:

ԱՎԵԼԻ ԽՈՐԱՆԱԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵԶ, ԱՎԵԼԻ ՈՒ- ԺԵՂ ԿԱՊ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ

Տեմպերի արագությունը այլ կերպ է դնում Համլուսաշխի տեղերի հետ ունեցած կապի և զեկավարության հարցերը: Պրոֆետրնախները, բյուլետենները, դրականությունները, այս ամենը զարդարում են ինտերեսային կառավագանքի համար հանդիպությունը: Հետագրներ, հեռախոսներ, ռադիո, լրագրեր—ահա թե ինչի միջոցով կարելի յետ տալ հարկավոր տեմպը: Մենք, ստեղծել ենք «Կուլտուրական Փրոնդում» բաղկութաղիրը, վոր լույս և տեսնում շաբաթ 3 անդամ: Պետք է ամենամոտ ժամանակում ավելի տարածել ռադիո կետերի ցանցը լուսաշխատավորների մեջ: Պետք է միության ռադիո աշխատանքները լայնացնել: Իշխանութուններն ավելի շետակեցի մի ռադիոստորոգ լուսաշխա-

տավորի, վորը բադիովիկացիայի եր յենթարկել համարյա
ամբողջ Ռիբինսկի ոկրուելը։ Արագ տեմպերը որակարդում
դնում են հետեւյալ խնդիրները, —կազմակրակել ուազիս սի-
րողներին, ոզնել ուազիս ակտիվիստ—լուսաշխատավորնե-
րին, ուազիսն ի սպաս զնել միտթենական աշխատանքներին
և առաջին հերթի արտադրական խնդիրներին։



Անչորի մեծանում և մամուլի և առանձնապես մեր «Ռւ-
սացչական լրագրի» դերը։ Մենք այս տարի մեծ հաջողու-
թյուններով մանում ենք բաժնեղրական նոր տարին—«Ռւ-
սացչական լրագրիր» դասնում և լուսաշխատավորի ան-
հրաժեշտ վեճքը, այդ լրագրի տիրաժը բարձրացել է 155-
000-ի։ Մենք խնդիր ենք դրել մոտ աղաղայըում՝ տիսրժը
Հացանել մինչև 300.000։ Վերջապես «Ռւսուցչական լրագրի»
բավանդակությունը, նրա դրույթը այլևս գուրս և յեկել ու-
սուցչական իր կոչումից։ «Ռւսուցչական լրագրիր» պետք ե
վերանվանել։

«Ռւսուցչական լրագրիր» պետք և ճշտի ավելի շատ զնել
ոկրուենքային տեսական հարցեր։

Ինչ պետք և անել տեղերում ոլլենումից հետո։ Պէճնու-
մում վոչ մի տարածայնություն։ չկար այն մասին, վոր
պետք և ստեղծել կուլտուրական շինարարության միասնուկան
պլան—դա անլիճելի յեմիջմիութենական կազմակերպու-
թյունների առջև այդ հարցը պետք և զնի մեր միությունը։
Յեթե մեր մեջ տարածայնություն չկա այն մասին, վոր բո-
լոր միությունների կուլտուրաշխատանքների մեջ պետք և լինի
ուժեղ կապ և փոխադարձ սղնություն-ապա այդ հարցը պետք
և զնել մեր միութենական կազմակերպությունները։ Բայց և
մենք մեզ պետք ե ասենք, վոր կուլտուրաշխատանքի թերաղնա-
հատումը ամյմս կնշանակի լուսաշխատավորների կոմունիս-

տական լուսավորության արժեքի թերապևտում, վորք
ժիռության աշխատանքների մեջ ոպորտունիղմի հայտնարե-
րում ինչպակա՞ի :

Վերակառուցենք, կուլտ աշխատանքը լուսավիատավորի
մարքս-լինինյան տեսությամբ դիմովելու լողաւնդի տակ :



ԼՈՒՍԱՀԻՒ Յ-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԳՐԱԳԱՐԱՆԻՑ ԼՈՒՅՑ ԵՆ
ՏԵՍԵԼ

1. ԱԲՈԼԵՆ—Պալքարենք զբուղի սոցիալիստական վերակառուցման համար
2. Յ-րդ պլենումի բանաձեռնոր և կոչեր
3. ՎԱԼԺԵՆԱ.՝Միութենական կուլտ աշխատանքի վերակառուցումը
4. I. ՄԵԽԱՆԱՌԵՆԱ. և ՅԵ. ԳՈՄՈՆ.՝ մողովորգական կրթության կադրերի մասին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039236

(084)

ԳԻՒԾ 15 ԿԵԴ.

636

